ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ / / Տ. Բակլաչյան
« » 2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Կոտայքի մարզ, Հրազդանի Հ. Թումանյանի անվան N5 հիմնական դպրոցի VIII ա դասարան

2023-2024 ուսումնական տարի

ԿՐԹԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՀԻՄՆԱԿԱՆՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ***Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը) 2023-2024ուս. տարում VIIIՍ դասարանում սովորում են 28 աշակերտ (12աղջիկ, 16 տղա):*** *Երեխաները օժտված են համապատասխան կարողություններով: Ֆիզիկապես առողջ են, ունեն իրենց տարիքին բնորոշ մտավոր կարողություններ:*

2.***Ուստարվա ընթացքում նախատեսվող ուսումնադաստիարակչական աշխատանքները:*** *Այս տարիքային խմբի երեխաների հետ տարվող ուսումնական աշխատանքները ավելի շատ պետք լինեն պարբերաբար տարվող զրույցներ՝ ընկերասիրության, փոխօգնության, հայրենասիրության մասին: Պետք է նպաստել լավագույն կոլեկտիվի ստեղծմանը: Երեխաների ինքնակրթության ստեղծման համար պետք է զարգացնել ինքնուրույն մտածելու, ստեղծագործելու կարողություն: Ուսումնադաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի կարգ ու կանոնին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ,անցկացնել զրույց-քննարկումներ ,իրականացնել դաստիարակությանը վերաբերվող ֆիլմերի դիտումներ ,որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար* ***աշակերտների հետ աշխատել առանձին , որպեսզի շտկել այդ թերությունները:*** *Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն,* ***մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :***

3.ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1Հոգևոր դաստիարակություն

ՈՒստարվա ընթացքում պետք է պարբերաբար զրույցներ անցկացնել հոգևոր դաստիարակության վերաբերյալ, հիշեցնել եկեղեցական տոների մասին: Պետք է այցելել մոտակա եկեղեցին, ծանոթացնել քահանայի հետ: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ/Եկեղեցի,Կիրակնօրյա դպրոց,Մշակույթի տուն,Գրադարան/: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:Պատկերացումներ տալ ազգային մշակույթի, ժողովրդական արժեքների, տարբեր ծիսակատարությունների, տոների ու հանդիսությունների մասին:

3.2Գեղագիտական դաստիարակություն

Երեխաների մեջ պետք է ձևավորել ճիշտ վերաբերմունք գեղեցիկի, բարու, ազնվության նկատմամբ: Սա կօգնի, որպեսզի երեխաներն ինքնուրույն կարողանան ստեղծել գեղեցիկը իրենց շրջապատում: *Երեխաների մոտ զարգացնել նկարչական*

*ունակությունների և կարողությունների ձևավորում,ծեփակերտման ունակությունների և կարողությունների ձևավորում,երաժշտական ընդունակությունների զարգացում,պարարվեստի տարրերի ձևավորում,դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորում,արտաքին և ներքին միջավայրի ձևավորման(դիզայնի)մասին ընդհանուր գաղափարների փոխանցում, գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացում և արտահայտիչ խոսքի ձևավորում:**Ստեղծել բարենպաստ միջավայրը ,որը հանդիսանում է երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական պայմանը և միջոցը:***

*3.3*Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Պետք է երեխային հասանելի դարձնել այն միտքը, որ իրենցից յուրաքանչյուրը պատասխանատու է իր երկրի, իր հայրենիքի համար: Հաճախակի կազմակերպել և անցկացնել ռազմական հայրենասիրական բնույթի մրցույթներ, հանդիպումներ, զրույցներ ,միջոցառումներ:

*3.4*Ֆիզիկական դաստիարակություն

Երեխաների մտավոր և ֆիզիկական դաստիարակությունը լրացնում են մեկը մյուսին: Պետք է սովորեցնել առողջ ապրելակերպի կանոնները, կազմակերպել դրան նպաստող խաղեր, միջոցառումներ: Զևավորել երեխաների շարժողական կարողություններն ու հմտությունները,զարգացնել հետաքրքրություն՝ երեխային մատչելի շարժողական գործունեության զանազան ձևերի նկատմամբ:

Կարևորել՝

- Առողջության պահպանումը և ամրապնդումը.

- Օրգանիզմի կոփումը, ճիշտ կեցվածքի ձևավորումը, հարթաթաթության կանխումը.

- Ֆիզիկական որակների ձևավորումը՝ ճարպկություն, արագաշարժություն,դիմացկունություն, ուժի զարգացում, կատարելագործում.

- Պարապմունքների օգտակարությունը, հիգիենայի պահանջների ու գիտելիքների ձևավորումը և կատարելագործումը:

*3.5*Աշխատանքային դաստիարակություն

Դաստիարակել ճիշտ վերաբերմունք աշխատանքի հանդեպ: Երեխաներին մասնակից դարձնել դպրոցի հանրօգուտ աշխատանքներին: Պետք է արժևորել կոլեկտիվի աշխատանքը: Աշխատանքը հանդիսանում է երեխայի համակողմանի և ներդաշնակ զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը,ուստի բազմատեսակ հնարքների միջոցով /խրախուսել,օրինակ ծառայել/հնարավոր է երեխաների մոտ առաջացնել աշխատանքի նկատմամբ՝սեր,մոտեցում,ձգտում: Աշխատանքը երեխայի կենսակերպի դրսևորման հզոր գործոններից մեկն է:

*3.6*Բնապահպանական դաստիարակություն

Մարդը բնության մի մասնիկն է, ուստի պետք է սեր արթնացնել դեպի բնությունը: Դասարանում պետք է ստեղծել փոքրիկ անկյուն ծաղիկների համար և այն պետք է խնամել: Էկոլոգիական դաստիարակությունը զարգացնում է սովորողների երևակայությունը,դիտողունակությունը: Երեխաներին պետք է սովորեցնել ոչ միայն սիրել բնության գեղեցկությունը, այլև պաշտպանել այն և հոգ տանել նրա մասին,պետք է սերմանել հարգանք և պատասխանատվություն բնության հանդեպ, որպեսզի

նրանք ոչ միայն զմայլվեն, հիանան գեղեցիկ ծառ ու ծաղկով, սար ու դաշտով, այլև մտածեն բնության պահպանության և խնամքի գործում իրենց սեփական ներդրման մասին:

3.7Դպրոց-ընտանիք կապը

Նախհարկավորէստեղծելծնողխորհուրդ, կազմակերպելհանդիպումներ, ժողովներ, որպեսզիամուրլինիդպրոց-ընտանիքկապը, ծնողներինմիշտմասնակիցդարձնելդպրոցականաշխատանքներին: Դաստիարակությունը հաջողությամբ է պսակվում, եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Ապահովելով ընտանիքի հետ համագործակցությունը հնարավոր է արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:Համագործակցությունը բերում է հետևյալ հարցերի լուծմանը՝

• բարձրանում է փոխադարձ վստահության մակարդակը,

•բարձրանում է աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը,

• ծնողները ավելի ակտիվորեն են ներգրավվում դպրոցի գործունեության մեջ,

• բարձրանում է ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությունը:

Ուս. շաբաթներ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատարման ժամկետը	Կատարողներ
1	<<Գիտելիքի օր>>: Նպատակն է՝ կարևորել դպրոցի, գիտելիքի դերը մարդու կյանքում	1.09.23	Աշակերտ դասղեկ
2	Ստեղծել դասարանի անկյուն, սահմանել հերթապահություն հակահամաճարակային կանոնների պահպանումը դասասենյակում:	8.09.23	Աշակերտ դասղեկ
3	<<Արդյոք ես հանդուրժող եմ>> թեմայով զրույց՝ նպատակն է բացահայտել սովորողների փոխհարաբերությունները:	15.09.23	Աշակերտ դասղեկ
4	Տոնդ շնորհավոր, Հայաստան, Հայաստանի պետականության վերականգնման 32 ամյակը	22.09.23	Աշակերտ
5	<<Ես հավերժ աշակերտ, Դուք հավերժ ուսուցիչ>>՝ մպատակն է արժևորել ուսուցչի	29.09.23	Աշակերտ դասղեկ

	դերը նոր սերնդի ձևավորման գործում		
6	Զրույց՝ <<Ես էլ քեզ նման եմ>> թեմայով՝ նպատակն է ձևավորել հարգանք դիմացինի նկատմամբ:	06.10.23	Աշակերտ
7	Աշունը գեղեցիկ է իր բազմազան գույներով	13.10.23	դասղեկ
8	<<Իմ իրավունքները և պարտականություն-ները>> թեմայով զրույց՝ նպատակն է աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները և պարտականությունները	20.10.23	Աշակերտ դասղեկ
9	Բուլլինգիկանխարգելում, կամինչէբուլլինգը, բուլլինգիհետևանքները:	03.11.23	Աշակերտ դասղեկ
10	<<Աշխարհն ու մենք, ուզում ենք սովորել բարեկարգ դպրոցում>> թեմայով զրույց	10.11.23	Աշակերտ դասղեկ
11	Հայաստանի էկոլոգիական խնդիրները, դրանց հնարավոր լուծումները:	17.11.23	Աշակերտ դասղեկ
12	<<Բնականաղետներ>>՝ նպատակնէներկայացնելբնականաղետներիառաջացմանպատճառներըևհետևանքները	24.11.23	Աշակերտ դասղեկ
13	<<Բնականաղետներ>>՝ նպատակնէներկայացնելբնականաղետներիառաջացմանպատճառներըևհետևանքները: Ֆիլմի դիտում:	01.12.23	Աշակերտ դասղեկ
14	<<Համացանցըիմընկերնէ, թեթշնամին>>՝ նպատակնէվերհանելհամացանցիդրականնբացասականկողմերը	08.12.23	Աշակերտդասղեկ
15	<<Ինչուենպետքմարդունթեր>>՝ նպատակնէ՝ դառնալուժեղ, հավատովլցված, երազող, պրպտողուանհանգիստմարդ	15.12.23	Աշակերտ դասղեկ
16	<<Ամանորիհեքիաթներ, երազանքներ…>> Առաջինկիսամյակիաշխատանքներիամփոփում, առաջադիմությանհարցերիքննարկում:	22.12.23	Աշակերտդասղեկ
17	<<Երկիրը, որտեղ…>>Նպատակնէ՝ զարգացնելաշակերտներիերևակայությունը, ճանաչողական, վերլուծականմիտքը	12.01.24	Աշակերտ դասղեկ
18	<<Կյանքիլույսնուստվերը>>՝ նպատակնէմտածելկյանքիոչմիայնլույսի, մարդկայինոգուվեհության, այլևստորությանուկեղծիքիմասին	19.01.24	Աշակերտ դասղեկ
19	<<Զինվորըչպարտվեց>>: Նպատակը՝ գնահատելՀայոցբանակիդերը, ձևավորելհայրենասերանհատ, հիշելհայզինվորներիսխրանքները 44-օրյապատերազմում, հարգանքիտուրքմատուցելՋրառատիպանթեոնում:	26.01.24	Աշակերտ դասղեկ
20	Անտարբերությունը, դրանից բխող հետևանք-ները, դրա դեմ ուղղված աշխատանքների հար-ցերի քննարկում:	02.02.24	Աշակերտ դասղեկ
21	<<Տեառն ընդառաջ>>: Նպատակն է՝ հարգել	09.02.24	Աշակերտ

	Հայոց եկեղեցու Տաղավար տոները, գնահատել ազգային ավանդույթները, մշակույթը:		դասղեկ
22	<<Գիրքը իմ կյանքում>>: Նպատակն է ՝ քննարկել կարդացած գիրքը, որոնել գրքի կերպարների նախատիպը կամ կրկնօրինակը շրջապատում:	16.02.24	Աշակերտ դասղեկ
23	<<Ես և իմ ծնողները>>: Նպատակն է, որ աշակերտները գիտակցեն ծնողի դերը մարդ-անհատի ձևավորման գործում:	23.02.24	Աշակերտ դասղեկ
24	<<Ինչ են պատմում ընտանեկան լուսանկարները>>: Նպատակն է՝ աշակերտը իմանա իր տոհմի պատմությունը, պահպանի ընտանեկան ավանդույթները:	01.03.24	Աշակերտ դասղեկ
25	<<Մարդ, ում մասին կուզեի ամեն ինչ իմանալ>>: Նպատակն է՝ բացահայտել աշակերտի ներաշխարհը, վերաբերմունքը շրջապատի նկատմամբ:	08.03.24	Աշակերտ դասղեկ
26	<<Մենք լավ ենք ճանաչում իրար>>: Նպատակն է ՝ վերլուծել մարդկային փոխհարաբերությունները, կապերը, բնավորության գծերը:	15.03.24	Աշակերտ դասղեկ
27	<<Ով եմ ես, ինչ գիտեմ իմ մասին, ինչ գիտեն իմ մասին իմ ընկերները, ինչը կփոխեի իմ մեջ>>	22.03.24	Աշակերտ դասղեկ
28	<<Ինչպես ազատվել բարդություններից>> ներկայացնել, թե ինչպես է զգում նախապաշարմունքի և կարծրատիպերի զոհ դարձած մարդը: Իրավիճակը հաղթահարելու համար ուղիներ փնտրել:	05.04.24	Աշակերտ դասղեկ
29	<<Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես, բայց չմոռանաս քո մայր լեզուն>>	12.04.24	Աշակերտ դասղեկ
30	<<Հիշում եմ և պահանջում>>: Նպատակն է՝ հիշել անմեղ զոհերին, դառնալ պահանջատեր:	19.04.24	Աշակերտ դասղեկ
31	Կատարված աշխատանքների թույլ և ուժեղ կողմերը	26.04.24	Աշակերտ դասղեկ
32	Զրույց՝ <<Ինչ անեմ, որ միշտ մնա իմ լեզուն, դավանանքը, ինչպես կվերաբերեմ աշխարհին, որ անտարբեր եղավ իմ ազգի ողբերգությանը>>	03.05.24	Աշակերտ դասղեկ
33	Զրույց՝ <<Գիտելիք, թե միավոր: Նպատակն է ՝ կարևորել գիտելիքի, ուսման դերը անձի ձևավորման գործում>>	10.05.24	Աշակերտ դասղեկ
34	Ամփոփիչ քննարկում:	17.05.24	Աշակերտ դասղեկ
35	<<Դպրոցական զանգ: ինչ խորհուրդ ունի այն>>: Հրաժեշտ դպրոցին	24.05.24	Աշակերտ, դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

Անցկացման օրը	Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը	ծանոթություն
15.09.24	Դասախոսություն Հայաստանի երրորդ հանրապետության մասին	
20.10.24	<<Իմիրավունքներըևպարտականությունները>> թեմայովզրույց	
10.11.24	<<Աշխարհնումենք, ուզումենքսովորելբարեկարգդպրոցում>>թեմայով զրույց	
08.12.24	Զրույց՝ <<Համացանցըիմընկերնէ, թեթշնամին>>	
26.01.24	Դասախոսություն և ֆիլմի դիտում <<Հայոց բանակ>> թեմայով:	
16.02.24	<<Գիրքը իմ կյանքում>>:	
15.03.24	<<Մենք լավ ենք ճանաչում իրար>>:	
19.04.24	<<Հիշում եմ և պահանջում>>:	
06.05.24	Զրույց՝ <<Ինչ արեցի իմ դպրոցական 9 տարիների ընթացքում>>	

ԾՆՈՂԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ

1	Արմինե Եղիազարյան	Նախագահ
2	Կարինե Առաքելյան	անդամ
3	Դիանա Կարապետյան	անդամ